

## ԴԻԱԼԱ ՆԱՅԿԻ ՆԱՄԱՐԱՆՈՒՄՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

# ՈՒ. ՖՈԼԴՆԵՐԻ «ԱԲԻՍՈՂՈՄ, ԱԲԻՍՈՂՈՄ» ՎԵՊԻ ԲԱՌԱՐՎԵՍՏԻ ԻՆՔՆԱՏԻՊՈՒԹՅԱՆ ՊԱՏՊԱՆՄԱՆ ԽՆԴԻՐԸ ՆԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ոչ միայն XX դարի ամերիկյան, այլև համաշխարհային գրականության մեջ իր հաստատուն տեղն ապահոված գրողի՝ Ուիլյամ Ֆոլքների ստեղծագործությունների հանդեպ հայ իրականության մեջ նկատված հետաքրքրությունն ընդգծվում է վերջին տարիներին նրա երկերի մի շարք հայերեն թարգմանությունների երևան գալով, որոնց շարքում է նաև «Աբիսողոմ, Աբիսողոմ» վեպը:

Մեր աշխատանքն առնչվում է «Աբիսողոմ, Աբիսողոմ» հայերեն թարգմանության մեջ հեղինակի բառարվեստի նրբությունների փոխանցման և վերարտադրության խնդիրների, քանի որ վեպն աչքի է ընկնում հատկապես իր յուրատեսակ լեզվական արվեստով՝ տարաբնույթ դժվարություններ հարուցելով դրանց հայերեն թարգմանության համար:

Վեպը հայերեն է թարգմանել և առանձին գրքով հրատարակել Սամվել Մկրտչյանը 2003 թվականին<sup>1</sup>:

Ու. Ֆոլքների ստեղծագործությունները հայտնի են ամերիկյան Հարավի իրականությունը պատկերելու հզոր լիցքերով: «Աբիսողոմ, Աբիսողոմ» վեպն<sup>2</sup> այդ կենսապատկերի իրական և ոգեղեն արտացոլքն է: Ֆոլքներն այն աներևույթի վարպետ տեսանողն էր, որը չէր կարող չօգտագործել անգլերենի հարուստ բառապաշարը և լեզվական բարձր արվեստով չներկայացնել բարդ ու հակասական իրականությունը: Մարդկային հոգու թռիչքի և անկման ամենախորքերը թափանցելով՝ Ֆոլքներն ի ցույց հանեց մարդու թե՛ առաքինությունները, թե՛ մոլորությունները, որոնց ճիրաններում տառապելով՝ մարդն ապրում է իրեն տրված երկար ու կարճ միջոցը և հեռանում, հեռանալով անգամ ներկա մնում ապրողների մեջ, նրանց խոսք ու զրույցի, վարք ու բարքի և շարունակական ողբերգության ու զվարճանքի մեջ: Իրականության վեհությունն ու նսեմությունը ցուցանելու համար գրողն ընտրել է այնպիսի բառապաշար, որի կիրառությունը լավագույնս բացահայտում է իրական աշխարհի իրական էությունը:

Ֆոլքներագիտության մեջ նկատված փաստ է Ֆոլքների բառարվեստի բազմերանգությունը, որտեղ պարզ և հասարակ խոսակցական շերտի բառամթերքը բազում թելերով հանգուցվում է վերամբարձ, մտքի (ուստի և լեզվի) վերացական ոլորտներ թափանցող

<sup>1</sup> Տե՛ս Ֆոլքներ Ու., Աբիսողոմ, Աբիսողոմ, թարգմ.՝ Սամվել Մկրտչյան, Ե., Վան Արյան, 2003, 395 էջ (այսուհետև՝ այս գրքից թարգմանական մեջբերումների էջերը կից բնագրին):

<sup>2</sup> Տե՛ս Faulkner W., Absalom, Absalom!, A novel, Russia, Progress Publishers, Moscow, 1982, 416p. (Այսուհետև՝ բնագրային բոլոր մեջբերումների էջերը կից բնագրին, ընդգծումներն իմն են - Դ.Ն.):



բառաշերտին:

Ֆոլքների բառարվեստի առանձնահատկություններից են նորաբանությունների (neologism), հնաբանությունների (այսպես կոչված «հնացած» բառերի կամ արտահայտությունների (archaism)) նորովի կիրառումը, ուղղակիորեն «նոր» բառերի ստեղծումը, բազմաթիվ իրակությունների գործածությունը, որոնց թարգմանությունը ցանկացած թարգմանչից պահանջում է թե՛ ստեղծագործական հզոր աշխատանք, գիտելիքի մեծ պաշար և լայն մտահորիզոն, թե՛ տքմաջան աշխատասիրություն, երբեմն՝ սիգիփոսյան համատություն:

«Արիստոդոմ, Արիստոդոմ» վեպի թարգմանության ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այստեղ կան թե՛ բազմաթիվ ձեռքբերումներ (հատկապես կապված բառային աշխատանքի հետ, որով և կանգուն է մնում ամենահզոր թափով խշշացող ֆոլքներից անտառը), թե՛ «տապալված» ծառեր (Խ. Դաշտենցի բնորոշումն է), որոնք միայն երբեմն դժվարանցելի են դարձնում գրող – ընթերցող ճանապարհը (քննությունը մեկ այլ հոդվածում):

Եթե ճիշտ է, որ գեղարվեստական թարգմանությունը բազում գիտական օրինակափությունների հավաստի իմացություն է և կիրառում է, ապա երիցս ճիշտ է նաև, որ այն ներհայեցական (intuitive) ձեռքբերումների հանրագումար է, որի արժեքորումը թարգմանչի աշխատանքի գնահատման կարևորագույն չափորոշիչն է: Այդ իմաստով «Արիստոդոմ, Արիստոդոմ» վեպի թարգմանությունն աչքի է զարնում ոչ միայն բառի (բառակապակցության) տարբերակային ճշգրիտ համարժեքների ընտրությամբ և տեղին կիրառությամբ (օրինակները՝ ստորև), այլև համատեքստային համարժեք փոխարինիչների բազում օրինակներով, որոնք և թարգմանչի ստեղծագործական աշխատանքի արդյունքն են:

Ու. Ֆոլքների բառապաշարի հարստությունն ու բազմաշերտությունն իրավամբ կարող է համեմատվել Օեքսպիրի ճոխ և բարձրարվեստ բառապաշարի հետ, որի հայ թարգմանիչը՝ Հ. Մասեհյանը, ըստ արժանվույն գնահատել և հայերեն է հնչեցրել այն: Տեղին է հիշել Մասեհյանի թարգմանությունների լեզվական արվեստի մասին Վարազ Առաքելյանի հոդվածը, ուր թարգմանության անաչառ գնահատության օրինակելի փաստը վարակիչ է, քանզի ոչ միայն հիացմունքի և երկրպագության հասնող գնահատանքի խոսքեր են հնչում մեծ թարգմանչի հասցեին, այլև գիտակ մարդու պրպտում աշխատանքի արդյունքում վեր են հանվում մի շարք անորոշություններ, լեզվաոճական թերություններ, ճապաղություններ, խրթին կրկնաբանություններ, մի խոսքով՝ «տապալված ծառեր», որոնց ուսումնասիրությունը շատ ուսանելի է յուրաքանչյուր թարգմանչի համար: Ուսանելի են նաև հոդվածագրի տեսական բնույթի ձևակերպումները. «Բառը, լեզվական որևէ արտահայտություն կամ հասարակ մի ձև միմիայն իմաստի, բովանդակության կամ քերականական հարաբերության կրող ու արտահայտող միջոցներ չեն: Դրանք պարուրված են այնպիսի բարդ երևույթներով ու առնչություններով, որոնք չափազանց պահանջկոտ ու քմահաճ լինելով հանդերձ՝ ոչ մի ուժի և պարտադրանքի չեն ենթարկվում: Դրանք ունեն գաղտնիքներ, որ բացահայտվում են, իրականացվում են այն դեպքում, երբ գործադրողի մեջ հրաֆրվում է ներքին ստեղծագործական անհանգչելի կրակ, երբ նա ունի բառը ճանաչելու հազվադեպ շնորհք ու ճաշակ, կարճ ասած, երբ նա խոսքի վարպետ է»<sup>3</sup>:

<sup>3</sup> Առաքելյան Վ., Հովհ. Մասեհյանի շնորհիվ թարգմանությունների լեզվական արվեստը, «Շնորհակալական», հ. 1, ՀՍՄՀ ԳԱ, Ե., 1966, 137-161, էջ 147:



Հենց այդ «ներքին կրակով» են ստեղծվում այն բոլոր նորարարությունները, որոնք առնչվում են մահ բառաստեղծմանը, եղած բառերի նորովի կիրառությանը, բոլորովին թարմ ու համարձակ խոսքի մասային փոխակերպումներին, մի բան, որ բազմաթիվ օրինակներով կարելի է տեսանելի դարձնել «Աբխողո՛մ, Աբխողո՛մի» թարգմանության մեջ: Մեր ուսումնասիրության արդյունքում հավաքած և ի մի բերած բազմաթիվ օրինակների քննությունը նպատակ ունի ոչ միայն ի ցույց հանել բնագրի բառամթերքի ինքնատիպությունը, այլև հայերեն թարգմանության մեջ այդ ամենի ստեղծագործ և գրագետ վերարտադրությունը: Հիշատակության արժանի են նորանոր բառերի ստեղծումը հատկապես «ան» նախածանցի օգնությամբ՝ տարածված գրքի այն հատվածներում, որոնք իրականության վերացարկված արձագանքն են հիշեցնում:

*«Itself circumambient and enclosed by its effluvium of hell, its aura of unregeneration, it mused... the dead sister Ellen: this Niobe without tears who had conceived to the demon in a kind of nightmare, who even while alive had moved but without life and grieved but without weeping, who now had an air of tranquil and unwitting desolation...»* (p. 36-37).

հմմտ.

*«Իրենով ամենակալ և դժոխքի ժամտահոտ գոլորշիներով ու անվերածնման պուքով շրջափակված՝ ուրվականը խորհում էր... մեռած քույր Էլենը, այս Նիոբեն առանց արցունքների, որը մղձավանջի մեջ հոլիացել էր դևից, մույնիսկ կենդանության օրոք շարժվել էր առանց կյանքի, վշտացել առանց ողբի, իսկ հիմա անվրդով ու անհիմաց հուսահատության տեսք ստացել...»* (էջ 13-14):

Հետաքրքիր է, որ 17, 20 և 9 տող ընդգրկող երեք նախադասություններում հանդիպող այս նորաստեղծ բառը՝ unregeneration-անվերածնում, զուգադրված է «impervious-անթափանցելի», «irrevocably-անդառնալիորեն», «harmless-անվնաս», «not even very attentive-փոքր-ինչ անուշադիր», «tranquil-անվրդով», «unwitting-անիմաց», «lifeless-անկյանք», «not even aware-անտեղյակ», «passive-անգործունյա», «incredulous-անհավատալի», «unbearable-անտանելի», «indomitable-անսաստելի» բառարանային արժեքների՝ մեծ մասամբ մակդիրային թարմ գործածությամբ, մույնիսկ հազվադեպ գործածվող «unforgiving-աններելիություն» գոյականի եզրափակիչ կիրառությամբ.

*«...embattled for forty-three years in the old insult, the old unforgiving outraged and betrayed by the final and complete affront which was Sutpen's death»* (p.37).

հմմտ.

*«...քառասուններեք տարի շարունակ զրահավորված հին վրեժի և աններելիության մեջ, որն ահագնացավ վերջնական ու եզրափակիչ վիրավորանքով՝ Սաթփենի մահով»* (էջ 14):

Ողջ հատվածի քննությունը զալիս է հաստատելու, որ «ան» ժխտական նախածանցով կազմված բառերի հաճախադեպ երևումը միևնույն հատվածում համապատասխանում է ո՛չ միայն զուտ բառակազմական, այլև հատվածի ներքին տրամադրության՝ ամլության պարտադրած օրինաչափությանը:

*«...so long as the blood coursed - the blood, the immortal brief recent intransient blood which could hold honor above slothy unregret and love above fat and easy shame.»* (p.277).



հմմտ.

«...քանի դեռ արյունը հոսում էր մրանց երակներում – արյունը, ամմահ մահկանացու ջահեղ և անանցավոր արյունը, որը պատիվը բարձր էր դասում անփութաջան անափստ-սանքից, իսկ սերը՝ ճարպոտ և դյուրին ամոթից» (էջ 300):

Այս հատվածի քննությունն ապացուցում է, որ Ֆոլքները ո՛չ միայն մերկապարանոց բարոյախոս չէր, այլև բարոյական ամենաբարձր չափանիշների՝ սիրո և պատվի ջանադիր կրողների՝ երիտասարդ ամերիկացիների՝ Շրիվի ու Քլեմենթիի հաստատուն գոյութիւնը կորուցնողն էր: Թարգմանչի ստեղծած «անափստսանք» գոյականը լավագույնս լսման վավերացնողն էր: Թարգմանչի ստեղծված մակդիրների (պատկերաստեղծ) համադրվում է կրկին «ան» նախածանցով ստեղծված մակդիրների (պատկերաստեղծ) եռակի գործածությամբ, որն այս անգամ առավել ուժգին ոճական երանգ է հնդդողում հատվածին՝ Ֆոլքների գրչին հատուկ այնպիսի ոճական հմարի օգնությամբ, ինչպիսին է «օքսիմորոնը»՝ «ամմահ մահկանացու», «անանցավոր արյուն», «անփութաջան անափստ-սանք» կապակցություններում: Երիտասարդ արյունը ժխտում է «մահը»; մերժում արյան անցավորությունն ու «ճարպոտ» ամոթը, և իհարկե տեղին է «ափսոսանքի» ամեն անտեսում՝ «անափստսանք»: Մի այլ հատվածում թարգմանիչը ստեղծել է «անօրգանիզմ» գոյականը, որն օգտագործված է Ֆոլքների փիլիսոփայական մտահայեցումն իր կերպարներից մեկի՝ Չարլզ Բոնի բնութագրման մեջ արտացոլելիս.

«...probably by that time he had learned that there were three things and no more: breathing, pleasure, darkness; and without money there could be no pleasure, and without pleasure it would not even be breathing but mere protoplasmic inhale and collapse of blind unorganism in a darkness where light never began.» (p.281).

հմմտ.

«...այդ ժամանակ նա երևի արդեն սովորել էր, որ երեք բան գոյություն ունի և ուրիշ ոչինչ՝ շնչառություն, հաճույք, մթություն. իսկ առանց փողի չկա հաճույք, առանց հաճույքի չի լինի նույնիսկ շնչառություն, այլ միայն նախանյութային մերձնյում և կույր անօրգանիզմի խորտակում՝ մթության մեջ, որտեղ լույսը երբեք չի ծագել» (էջ 304-305):

«Նախանյութային մերձնյում և կույր անօրգանիզմի խորտակում՝ մթության մեջ» երկարաձգված փոխաբերությունը, որ զգայական և ոգեղեն (լուսի) աշխարհին հակադիր մթամած խարխալման, «նախանյութային անօրգանիզմի» անդունդը գլորվելու՝ խոսում պատկերի ստեղծման հիմնալի ոճական միջոց է, առավել պատկերավոր է դառնում հայերենի այս նորաստեղծ բառի՝ «անօրգանիզմի» գործածությամբ:

Ուշագրավ է Թոմաս Սաթփենի երկրորդ կնոջ՝ Էլենի, իրենց դասեր՝ Ջուդիթի, և Սաթփենի՝ իր առաջին կնոջից՝ Յուլիյիս Բոնից ունեցած միակ որդու՝ Չարլզ Բոնի նշանադրության (նույնիսկ հույսի) հանդեպ հուզական վերաբերմունքի նկարագրությունը, որտեղ թարգմանիչն օգտագործել է հազվադեպ գործածվող «նախաաշնան» բառը, որպես անգլերեն «Indian summer» բառակապակցության տարբերակային համարժեք թարգմանություն (որն իբրև բառարանային բացատրություն, հանդես է գալիս «տաք, չոր օրեր վաղ աշնանը, տաք աշուն» շարքում), որն էլ լավագույնս արտահայտում է Էլենի զգացմունքի վաղանցիկության և մոտակա վտանգին անտեղյակության, երջանկության անհմարինության բավականին խոսում իրադրության լարվածությունը.



«...which Bon seems to have spent either in riding and hunting with Henry or as acting as an elegant and indolent esoteric hothouse bloom, possessing merely the name of a city for origin history and past, about which Ellen preened and fluttered out her unwitting butterfly's Indian summer...» (p. 107).

հմմտ.

«...որոնք Բոնն անցկացրեց... կամ հանդես գալով որպես նրբագեղ, ալարկոտ և անհայտ շերմոցային ծաղիկ՝ սոսկ մի քաղաքի անուն ունենալով իր ծագման ու անցյալի համար, որոնց շուրջը Էլենը փետուրներն էր հարդարում ու ճախրում անզգույշ թիթեռնիկի նախաաշնան մեջ...» (էջ 97):

Այս հատվածում հետաքրքիր է նաև «unwitting» բառի թարգմանությունն «անզգույշ», որպես բառարանային տարբերակային համարժեք, ի տարբերություն նախորդ հատվածներից մեկում նույն բառի համատեքստային փոխարինիչի ստեղծմանը, որը խոսում է թարգմանչի ստեղծագործ մտքի և երևակայության մասին (unwitting desolation) (p. 37) - անիմաց հուսահատություն (էջ 13):

Թարգմանության մեջ մեր ուշադրությունը գրավեց այն փաստը, որ բազմաթիվ բառեր օգտագործված են որպես բոլորովին նոր խոսքիմասային միավորներ, մի բան, որ բառարաններում ամրագրված չլինելով՝ նորաստեղծ են, եթե նույնիսկ նրանց արմատներն այլ խոսքի մասում կամ բառակապակցության մեջ առկա բառարանային արժեքներ են: Օրինակ՝ «անձնատուր» բառը, որը գործածվում է «անձնատուր լինել» բայական բառակապակցության մեջ (շատ հազվադեպ՝ «անձնատրվել» բայական խոսքիմասային կիրառությամբ), այս թարգմանության մեջ մի շարք նոր խոսքիմասային կիրառություններ ունի (համեմատելիս, գործածության հաճախականության իմաստով). «անձնատրվելիք» (ածականաբար գործածված գոյական), «անձնատրություն» (գոյական):

« - Once there was (they cannot have told you this either) a summer of wistaria. It was a pervading everywhere of wistaria (I was fourteen then) as though of all springs yet to capitulate condensed into one spring, one summer...» (p.147).

հմմտ.

«Մի անգամ, ուրեմն (սա էլ չեն կարող քեզ ասած լինել), գլիցինիայի ամառ եղավ: Օդն ամենուր գլիցինիայով էր լցված - այդ ժամանակ տասնչորս տարեկան էի, ասես անձնատրվելիք բոլոր գարունները խտացել էին մեկ գարնան ու մեկ ամռան մեջ...» (էջ 146):

Անգլերեն լեզվի «to capitulate» բայն ունի հետևյալ բառարանային համարժեքները. «անձնատուր լինել, անձնատրվել, կապիտուլյացիայի ենթարկվել», որոնցից վերջինս անգլերեն բառի արմատի պատճենմամբ (ռուսերեն ամբողջական բառի՝ «капитуляция» պատճենմամբ) ու հայերեն լեզվում գոյականի հոլովական վերջավորությամբ՝ «-ի»-ի կիրառությամբ և «ենթարկվել» բայով կազմված բառակապակցություն է, որն իրավացիորեն անտեսվել է թարգմանության մեջ և նախապատվությունը տրվել է հայերեն համարժեքին՝ «անձնատրվել» բային, որի օգնությամբ թարգմանիչը ստեղծել է «անձնատրվելիք» գոյականը՝ «իք» գոյականակերտ վերջածանցով, այն գործածելով ածականաբար՝ «անձնատրվելիք գարուններ» բառակապակցության մեջ: Անշուշտ, կարելի էր նաև գտնել հայերեն այնպիսի համարժեք թարգմանություն, որտեղ պահպանվեր բնագրում գործածված



բառի խոսքիմասային պատկանելությունը, ինչպես, ասենք՝ «...ասես բոլոր գարունները, որ դեռ պիտի անձնատուր լինեին (անձնատրվեին)» կամ «...որ դեռ պիտի տրվեին իրեն...», որտեղ անգլերեն անորոշ դերբայով (infinitive) արտահայտված «to capitulate» բայը, որ մախադասության մեջ հանդես է գալիս որոշի դերում, կարող էր թարգմանվել վերոնշյալ որոշիչ երկրորդական մախադասությամբ, որը մույնպես կպահպաներ բնագրի դիրքը: Սակայն, քանի որ թարգմանությունը մաս թարգմանչի առանձնահատուկ ձեռագրի կնիքն է կրում, ուստի թարգմանված տարբերակը ոչ միայն համարժեք է բնագրին, այլև կնիքն է կրում, ուստի թարգմանված տարբերակը, տվյալ դեպքում՝ մախապատվությունը արտահայտում է թարգմանչի մախասիրությունը, տվյալ դեպքում՝ գոյականների տալ «ունք», «անք», «ք», «ելիք», «ալիք» գոյականակերտ վերջածանցներով գոյականների բազմակի գործածությունը, որոնք առանձնահատուկ վեհություն և վերամբարձություն են հաղորդում խոսքին (մի բան, որ անհրաժեշտ է Ֆոլքերյան շունչն ու ոճը պահպանելու համար): Այս մասին ավելի մանրամասն վերլուծություններ կներկայացնենք ավելի ուշ:

«Yes, running out of that first year (that year before the War) during which Ellen talked to me of trousseau (and it my trousseau), of all the dreamy panoply of surrender which was my surrender, who had so little to surrender that it was all I had because there is that might-have-been which is the single rock we cling to above the maelstrom of unbearable reality - ...» (p. 152).

հմմտ.

«Այո, վազքն սկսվել էր հենց առաջին տարվանից (Պատերազմին մախորդած տարվանից), որի ընթացքում էլենն ինձ հետ խոսում էր օժիտի մասին (որն իմ օժիտն էր), անձնատրության բոլոր երազային զենք ու զրահների մասին (որն իմ անձնատրությունն էր). այնքան քիչ բան ունեի անձնատուր լինելու, հանձնելու, որ դա էր միակ ունեցածս, որովհետև գոյություն ունի մի հնարավոր անցյալ՝ եզակի մի վեժ, որից կառչում ենք անտանելի իրականության հորձանուտի վրա» (էջ 153):

Ուշագրավ է այն փաստը, որ բնագրի այս հատվածում երեք անգամ հանդիպող «surrender», «my surrender», «to surrender» բառը (գոյական և ածական խոսքիմասային կիրառությամբ), որի բառարանային համարժեքներն են. «հանձնում, անձնատրություն, հրաժարում», «հանձնել, անձնատուր լինել, զիջել, մահանջել, հրաժարվել», թարգմանված է դարձյալ տարբերակային համարժեքի ընտրությամբ՝ «անձնատրություն», «անձնատուր լինել» բառով, բառակապակցությամբ, որի կողքին կարծես ինչ-որ բան հավելելու, ճշգրտելու նպատակով գործածվել է «հանձնել» բայը, որը, մեր կարծիքով, տվյալ դեպքում արդարացված չէ, քանի որ «անձնատուր լինելը» լիովին փոխանցում է բնագրի «to surrender» բայի համատեքստային արժեքը:

«And so he went into the house: and maybe somebody looking at him would have seen on his face an expression a good deal like the one - that proffering with humility yet with pride too, of complete surrender - which he had used to see on Henry's face...» (p. 298).

հմմտ.

«Ուրեմն, մա տուն մտավ, և մրա դեմքին բացարձակ անձնատրության խոնարհություն կար, բայց մաև հպարտություն, - այն, ինչ մախկինում տեսնում էր Հենրիի դեմքին...» (էջ 325):



Ուշադրության արժանի է այն փաստը, որ բնագրում հանդիպող «of complete surrender» ետադաս բառակապակցությունը թարգմանության մեջ ոչ միայն դարձել է մախադաս, այլև կցվել է «humility» - «խոնարհություն» գոյականին՝ իբրև որոշիչ, հակադրվելով «pride» - «հպարտություն» գոյականին, որը, մեր կարծիքով, համարժեքորեն է ներկայացնում բնագրի «with humility yet with pride too» հակադրությունը՝ հիմնված «խոնարհություն»-«հպարտություն» մարդկային հատկանիշների տրամաբանական հակադրամիասնության վրա:

«Nearer and nearer, until suspense and puzzlement and haste and all seemed blended into one sublimation of passive surrender in which he thought only *All right.*» (p.308) («*All right*» ընդգծումը՝ հեղինակի -Ու. Ֆոլքների):

հմտ.

«Ուրեմն, ավելի ու ավելի էր մոտենում այդ պահին, մինչև որ անորոշությունը, շփոթմունքն ու անապարանքը միախառնվում էին անգործունյա անձնատուրության և վեհացման մեջ, որտեղ մա միայն մտածում էր *Բարի*» (էջ 336):

Այս հատվածում հանդիպող «passive surrender» բառակապակցությունը ներկայացնում է իբրև «sublimation» գոյականի լրացում, որի բառացի թարգմանությունը կլիներ. «անգործունյա անձնատուրության վեհացում», քանի որ «to sublimare» բառի բառարանային համարժեքներից մեկը քիմիական տերմին է. «սուբլիմել, սուբլիմացիայի ենթարկել», իսկ մյուսն ունի հետևյալ տարբերակային համարժեքները՝ «բարձրացնել, ազնվացնել, իդեալականացնել», ուստի, ելնելով համատեքստից, կարելի է թարգմանել համատեքստային փոխարինիչով, որն էլ արել է թարգմանիչը, սակայն մա ընտրել է «անձնատուրության և վեհացման» գոյականային թվարկման տարբերակը, որը լավագույնս արտահայտում է մարդկային հոգու այն քառը, որում հայտնվել էր Չարլզ Բոնը՝ սիրելով-չսիրելով, ինքն իրեն արգելելով և այլոց կամքին հպատակվելով՝ չամուսնանալ արյունակից քրոջ հետ:

Ֆոլքների բառարկեստի առանձնահատկություններից մեկը՝ վերամբարձ ու վեհ հնչողությամբ բառերի բազմակի կիրառությունները, թարգմանչին մղել են հայերեն լեզվի զանազանից դուրս բերել բազմաթիվ բառային միավորներ, որոնք իրենց վրա են կրում թե՛ գրաբարյան վսեմաշուք հնչողության ազդեցությունը, թե՛ բանաստեղծական պատկերավորության, բառի փոխաբերական իմաստների և ամենաբարձր հուզականության կնիքը:

«...որոնց փրկել մա չէր գորում» (էջ 18), «...մինչև վերջ և ցմրուր» (էջ 20), «...որոնք տիվ ու գիշեր հագնում էր...» (էջ 36), «...ընտանյոք դուրս եկած չկար...» (էջ 63), «...որոնց կենդանի արյան ու սերմի մեջ ինքներս սպասել ենք քնեացած, անթափանց մոծում այս ժամանակի...» (էջ 101), «...մեր ձայները հուշիկ...» (էջ 140), «...ես տակավին երեխա էի...» (էջ 140), «...անքուն մի մարմաշով... ոչ մի սեր առ լույսն...» (էջ 147), «...էլենի շաղակրատ ու սին հիմարությունից...» (էջ 149), «...այո, այդ անքթիթ անվարան ձեռքից վերցրեց մոմն ու մտածեց...» (էջ 156), «...մեր կյանքի խոնջ ու պարբերական առօրյայից...» (էջ 162), «...այն էլ... կատաղի կոծած, արբշիտ՝ կայարանամերձ փողոցի նեղրական խանութներում...» (էջ 217), «...ընչավետ անդորրի հազարավոր օրեր...» (էջ 277), «...վրեժի անագործուն կամք...» (էջ 302), «... չնաշխարհիկ, գրգամուլի դեմքին...» (էջ 321), «...թե ինչպես ետ դարձավ անվակոսներով՝ մթնում գայթելով...» (էջ 360) և այլն



(օրինակները դեռ կարելի է երկար շարունակել):

Թարգմանությունն ուսումնասիրելիս նկատեցինք, թե որքան շատ և հաճախեայ էին «անք», «ունք» ածանցով բառերի կիրառությունը, ուստի ակամա հիշեցինք Վարազ Առաքելյանի՝ Մասեհյանի շեքսպիրյան թարգմանությունների լեզվական արվեստի մասին արած դիպուկ դիտողությունը. «Հայերենի ք և անք ածանցով որոշ բառեր կիրառվելով միարժեք դիպուկ դիտողությունը. «Հայերենի ք և անք ածանցով որոշ բառեր կիրառվելով միարժեք բառեր բանաստեղծական խոսքի մեջ, ձեռք են բերել արտակարգ հանդիսավորության, մեծափառություն, հուզարտահայտչական զարմանալի մի վեհություն: Այդ կարգի լույս, մեծափառություն, հուզարտահայտչական զարմանալի մի վեհություն: Այդ կարգի լույս գեղարվեստական խոսքի մեջ մշակել են Ավ. Իսահակյանը, Վ. Տերյանը: Դժվար է այստեղ հետևողական հարցը մեջտեղ քաշել, բայց անհրաժեշտ է նշել, որ հիշյալ կարգի բառերի ոճաբանական այդ հիասքանչ հատկությունները առաջինը հայտնաբերել է Մասեհյանը և կիրառել է խոսքի մեծ վարպետների հատուկ նուրբ արվեստով»<sup>4</sup>:

«Աբխաղո՞ւմ, Աբխաղո՞ւմի» հայերեն թարգմանության մեջ բառային վերլուծություններ կատարելիս համոզվեցինք, որ Ֆոլքների բառարվեստին նույնպես բնորոշ այս ինքնատիպ պոետիկ վերոհիշյալ բառերի ոճաբանական և հուզարտահայտչական նմանատիպ առանձնահատկություններն առկա են նաև թարգմանության մեջ, որոնք և ներկայացնում ենք ձեր ուշադրությանը:

«Ընճողուկները ծաղկունքի մեջ» (էջ 8), «օղը լի էր համբերանքով» (էջ 10), «իսկ Ջեֆերսոնը վճարեց տան զվարճանքի համար» (էջ 18), «մշտապես աճապարանքի մեջ էր» (էջ 34), «մինչև որ ձայնը բաժանեց մեզ ու հեռացրեց դյուրանքը» (էջ 144), «արբեցում ծաղկունքի, զարթոնքի, ժամի և եղանակի քաղցր հարակցության» (էջ 146), «բնական անժուժկալությունից մինչև հնարավոր հպարտություն, դիրքի տենչանք» (էջ 163), «...որով վճարել էր արտասահմանի ճարտարապետին - խաբելով համոզելը, խոստումը, սպառնանքն ու վերջապես բռնի ուժը» (էջ 166), «...այսպես գեղջկական սթափ և անշարժ ապշանքի առաջ հայտնվում ու կորչում էին անծանոթ դեմքերն ու վայրերը...» (էջ 233), «...որն ստիպել էր Օրիվիոն սկզբից ևեթ մայել նրան սևեռում, մեկուսի խոկմունքով և հետաքրքրությամբ...» (էջ 262), «...նա զբաղված էր չնչին բաների մասին վերացական մտորմունքներով...» (էջ 277), «...միայն թե ոչ որպես վերջին սփոփանք...» (էջ 278), «Սա էլ շաղակրատանք չէր: Սա նույնպես թեթևամտության այն պաշտպանական երանգավորումն էր, որի ետևում հուզմունքի պատանեկան շիկմանքն էր թաքցված և որը հատուկ էր նաև Քվենթինին, նրա մոայլ շփոթմունքի, թեթևամտության (երկուսի) և խեղաթյուր ծաղրածվության պատճառն էր...» (էջ 286):

Այս բոլոր նկատված յուրահատկությունների կողքին թարգմանության մեջ աչքի է զարնում նաև հայերենի խոսակցական շերտին պատկանող բառային միավորների, ժողովրդական բառ ու բանի տեղին գործածությունը, որն առանձին ծավալում ուսումնասիրության նյութ է:

<sup>4</sup> Առաքելյան Վ., Հովհ. Մասեհյանի շեքսպիրյան թարգմանությունների լեզվական արվեստը, «Շեքսպիրական», հ. 1, 137-161, 19154: